ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-14-Ը ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
Ավստիայի Հանրապետություն (Վիեննա), 2020թ. փետրվարի 10-14,

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Հրավերը ստացվել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության կողմից:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
Գործուղման նպատակն էր մասնակցել Միջուկային ավտանգության թեմայով միջազգային կոնֆերանսին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Նիստի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Միջուկային անվտանգության ազգային ռեժիմների պահպանման և առավել ամրապնդման, ինչպես նաև միջազգային համագործակցության ոլորտում միջուկային անվտանգության ամրապնդման ուղղությամբ տարվող տեղեկատվության բարձրացումը

- Միջուկային անվտանգության ներկայիս կարգավիճակը, առկա մոտեցումներն ու միտումները և ընդգծելվել են այն ոլորտները, որոնք կարող են ավելի մեծ ուշադրության կարիք ունենալ

- Նպաստել ԱԷՄԳ-ի միջուկային անվտանգության ուղեցույցի և միջազգային այլ ուղեցույցների պատրաստմանը, ինչպես նաև խրախուսել դրանց օգտագործումը անդամ պետությունների կողմից

- Նպաստել միջուկային անվտանգության ոլորտում տեղեկատվության և լավ փորձի փոխանակմանը

- Վերհաստատվեց ԱԷՄԳ-ի կենտրոնական դերակատարումը միջուկային անվտանգության գործում

- Ընդգծվեցին ԱԷՄԳ-ի ջանքերն ու ծրագրերը ԱԷՄԳ-ի և ՄԱԿ-ի միջուկային անվտանգության համապատասխան գործիքների վերաբերյալ.

- ԱԷՄԳ-ի միջուկային անվտանգության գործունեության հետագա բարելավումները և դրանց կայունությունը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպում է տեղի ունեցել Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Ռաֆայել Գրոսիի հետ, որին մասնակցել է նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Զ. Մնացականյանը:

Զրույցի ընթացքում կողմերն անդրադարձել են Հայաստանի և ԱԷՄԳ-ի միջև փոխգործակցության օրակարգի մի շարք հարցերի, մասնավորապես՝ Մեծամորի ատոմակայանի աշխատանքի ժամկետների ու անվտանգ գործունեության, միջուկային էներգետիկայի զարգացման և միջուկային անվտանգության հարցերին: ԱԷՄԳ գլխավոր տնօրենը բարձր է գնահատել միջուկային էներգետիկայի բնագավառում անվտանգության բարձրացման ուղղությամբ Հայաստանի կողմից իրականացվող շարունակական բարեփոխումները:

Միջուկային էներգետիկայի խաղաղ նպատակներով օգտագործման համատեքստում մտքեր փոխանակվեցին նաև միջազգային ու տարածաշրջանային զարգացումների շուրջ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀԱԷԿ-ի արդիականացման և վերազինման աշխատանքների շրջանակներում ԱԷՄԳ-ն իր պատրաստակամությունը հայտնեց օժանդակելու Հայաստանին ստանձնած դժվարին և պատասխանատու գործում: Սարքավորումների ներմուծման դեպքում ՀՀ-ն պետք է վերանայի հարկերից ազատման հնարավորությունը:

Նիստի արդյունքներով ստորագրված փաստաթղթեր չկան:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱԷՄԳ-ն պատրասակամություն է հայտնել օժանդակելու ՀԱԷԿ-ում սթրես-թեստերի անցկացմանը, որոնք միջազգային հանրությանը ցույց կտան ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործման իրական ռեսուրսը և հնարավորությունները:

ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Ռաֆայել Գրոսսը, հրավիրվել է Հայաստան՝ տեղում ծանոթանալու ՀԱԷԿ-ի թիվ 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի շրջանակներում իրականացվող արդիականացման աշխատանքներին և անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի ներդրման ընթացքին:

10. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ</u>

17/02/2020